



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԽԱՉԱԵՐԱՅԷՆ ԵՏՔ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Բարի Գործերու Մասին	էջ 2
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(17.7-14)

Երբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յառէ: Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառեն իրենց զարչելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը քաղաքներդ պիտի լքուին եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարպուեցան ամորհացիներու եւ խեւացիներու քաղաքները իսրայելացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լքեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ սակայն հունձքին արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրամութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն: Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն

սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուած պիտի ճզմէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը քշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'ալէ կառքերուն հանած փոշին:

Ողբ ու կոծով պիտի փակուի օրն իրենց, առաւօտը դեռ չբացուած՝ ա՛լ գոյուլթիւն պիտի չունենան: Ահա ա՛յս պիտի ըլլայ մեր յափշտակիչներուն, մեր կողոպտիչներուն վիճակուած ճակատագիրը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԻ ՆԱՄԱԿԷՆ

(13.5-13)

Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ

Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին...

խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ո՛ղջ եղէք: Կատարեալ ըլլալու աշխատեցէք. մխիթարուեցէք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիի հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (11.27-33)

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները, եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն թէ մարդոցմէ: Պատասխանեցէք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ թէ ինչո՛ւ չհաւատացիք իրեն. իսկ “մարդոցմէ էր” չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախնալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

«...կ'նկենք որ դուք բարին գործէք»,
Բ. Կր 13.7,

«...կ'նախաջանք որ հետզհետէ կատարեալ ըլլաք»,
Նոյն, հմր 9:

Այստեղ պիտի չխօսիմ Աստուծոյ գործերուն մասին, ո՛չ ալ՝ Քրիստոսի, եւ ո՛չ ալ՝ Չարին: Այլ՝ մարդու գործերուն մասին:

Նախ, ի՞նչ է գործը:

Իր լայնագոյն հասկացողութեան մէջ՝ ամէն ինչ որ մարդը կ'ընէ:

Նաեւ՝

- որեւէ տեսակի աշխատանք.
- արդիւնք ֆիզիքական աշխատանքի.
- արդիւնք մտքի կամ հոգիի աշխատանքի.
- պաշտօն, եւայլն:

Աստուածաշունչին մէջ արարչութեան ամէն մէկ ստեղծումը «գործ» կոչուած է: Կը կարդանք. «Եւ Աստուած իր բոլոր գործերը եօթներորդ օրը լմնցուց ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն» (Ծն 2.2): Այս ամէն մէկ ստեղծումին «գործ» անուանումը պարապ տեղը չէ: Ըսել ուզուած է, թէ Աստուած ինքն է օրինակը գործի: Եւ Աստուծոյ գործը բարի է: Ծնունդներու գիրքին առաջին դրուագէն գիտենք, որ արարչութեան իւրաքանչիւր դրուագէն ետքը՝ Աստուած կը տեսնէ, թէ ստեղծուածները բարի են: Դարձեալ ըստ նոյն դրուագին, Աստուած մարդ էակին կը պատուիրէ «տիրել» երկրին վրայ (Ծն 1.28): Արդ, սկիզբէն մարդուն գործ մը կու տայ Աստուած. իր բարի գործերը անոր կը վստահի:

Ի՞նչ էր մարդէն սպասուածը:

Արարչութեան վրայ տիրութիւն ընել (տե՛ս Ծն 2.5):

Ի՞նչ կը նշանակէր ասիկա:

Գործակից ըլլալ Աստուծոյ կամ՝ մասնակից անոր փառքին:

Սակայն նախածնողներուն անկումին դրուագով՝ ստեղծագործութիւնն ալ կ'իյնար: Պօղոս առաքեալ գրած է. «Արդարեւ, ստեղծագործութիւնը ինք եւս մարդուն հետ ակամայ դատապարտութեան ենթարկուեցաւ Աստուծոյ հրամանովը, որ սակայն

նաեւ սա յոյսը տուաւ, թէ ստեղծագործութիւնը ինք եւս պիտի ազատագրուի փճացումի դատապարտութենէն, մասնակից դառնալու համար Աստուծոյ որդիներուն ազատութեան ու փառքին: Եւ դիտենք, թէ մինչեւ հիմա ամբողջ ստեղծագործութիւնը երկունքով կը հեծէ այդ ազատագրութեան հասնելու համար» (Հո 8.20-22):

Այն անկումին հետեւող մարդուն տրուած պաշտօնը՝ ալ տիրութիւն ընել չէր Աստուծոյ գործին, այլ մշակել («Երեսիդ քրտինքով ուտես քու հացը, մինչեւ գետին դառնալդ» – Մն 3.19):

Ի՞նչ հասկնալ «մշակել» բառով:

Մշակը հոգ կը տանի պարտէզին: Զայն կը փորէ կամ կը հերկէ, եւ կը ցանէ կամ կը տնկէ անոր մէջ, եւ ծառերուն անպտուղ ճիւղերը հոտելով, զանոնք դեղելով, հողին փուշերն ու տատասկները արմատախլելով կը մաքրէ, որպէսզի պարտէզը պտղաբեր ըլլայ, ընտիր պտուղներ տայ:

Մշակելը հոգատարութիւն է անկեալ ստեղծագործութեան վրայ, եւ ոչ թէ տիրութիւն ընել:

Մարդուն անկումը ուրիշ բան չէ քան մարդուն ենթարկուիլը մեղքին: Եւ մեղքին ենթակայութեան մէջ՝ մարդ էակը չի կրնար տիրութիւն ընել Աստուծոյ գործին: Իր մեղաւորութիւնը պատճառն է նախ եւ առջ իր հոգիի երկրին վրայ «փուշ» երու եւ «տատասկ»ներու աճումին: Այդ ներքին երկրին մէջ, մարդ էակը մշակի գործ ունի տանելիք: Առանց ներքին երկրի մշակումին՝ կարելի չէ արտաքին երկիրը մշակել: Այս մշակի գործը, ուրեմն, իրարու սերտօրէն առնչուած երկու տարածքներու վրայ ազատագրումի գործընթաց է:

Ատոր համար ալ Աստուած ըսած է Հին Ուխտի ժամանակ. «Օրէնքներու գիրքը քու բերնէդ թող չգատուի, հապա գիշեր ցերեկ անոր վրայ մտածէ, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես. քանզի այն ատեն քու գործերդ յառաջ պիտի տանիս եւ այն ատեն յաջողութիւն պիտի գտնես» (Յես 1.8):

Ըստ այս մէջբերումին, Աստուծոյ հաճելի գործերը անոնք են՝ որոնք կը հիմնուին Օրէնքներու գիրքին վրայ: Աւելորդ է ըսել, թէ Աստուծոյ հաճելի գործերը՝ բարի գործերն են:

Մարդկային կեանքը թէ՛ իր ներքին եւ թէ՛ իր արտաքին ընթացքներով փոփոխութիւններ կը կրէ: Ուստի, Յիսուսի գալով կամ Նոր Ուխտին հաստատումով՝ մարդուն պիտի յայտնուէր, որ թէեւ Օրէնքներու գիրքին մէջ գրուածները պահելն

ու կատարելը բարի գործերու մէջ ըլլալ էր, սակայն կատարելութեան հասնող ճանապարհին մէջ ըլլալ չէր:

Իսկ ինչպէ՞ս է, որ բարի գործերը կատարելութեան ճանապարհին մէջ կ'ըլլան:

Ընկերային ամբողջանուէր յանձնառութեամբ եւ Յիսուսի հետեւելով (կարդա՛ Մտ 19.16-21):

Այն գործերը բարի են՝ որոնք առիթ կ'ըլլան Երկնաւոր Հայրը փառաւորելու: Յիսուս ըսած է. «...ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է» (Մտ 5.16): Երբ որեւէ գործ անհատական շահի ձգտումներ կամ անհատին փառաւորուելու ակնկալութիւնը կը յայտնէ, ապա ուրեմն՝ բարի գործ չէ: Անհատապաշտ գործը չի կրնար բարի ըլլալ: Եւ այն գործը որ բարի չէ՝ կեանքին համար չէ:

Բայց ո՞վ գիտէ, թէ իր գործերը բարի են:

Պօղոս առաքեալ գրած է. «Իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի» (Ա. Կր 3.13): Ըսել ուզուածին մէկ միտքը այն է, թէ մարդուն չ'իյնար իր գործը բարի որակելը. այդ պաշտօնը, եթէ կարելի է ըսել, Աստուծոյ իրաւասութիւնն է:

Ասիկա գգաստութեան հրաւէր է: Ոչ ոք իր ըրած գործերով թող չհպարտանայ: Այլ միայն՝ «ամէն մէկը թող իր գործը կշռէ եւ իր գոհունակութիւնը միայն ինքն իրեն պահէ, փոխանակ ինքզինքը ուրիշներու հետ բաղդատելու» (Գղ 6.4):

Ազատագրումի գործընթացին մէջն է մարդը, մինչեւ որ իր հանգիստը գտնէ Աստուծոյ մէջ: Մինչ այդ ան իր հոգին պիտի բաց պահէ Աստուծոյ կամքին առջեւ, որ աղբիւրն է ամէն տեսակ բարեգործութեան (հմտ Եբր 13.20):

Բարեգործութիւնը կը վերականգնէ մարդը:

Բարեգործութիւնը կը վերականգնէ երկիրը:

«ամէն մէկը
թող իր գործը
կշռէ եւ իր
գոհունակու-
թիւնը
միայն ինքն
իրեն պահէ,
փոխանակ
ինքզինք
ուրիշներու
հետ
բաղդատելու»:



ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ
ՀԱՄԱՐ

Ս. Գրիգոր Սերսողոմաիս

Հաբա 17 Հոկտեմբեր 2009

Հաբա 24 Հոկտեմբեր 2009

Երեկոյեան ժամը 7.00-ին

Մոսթաբալի Հայ Կեդրոնի
Հոգաբարձուհեան Ժողովարար

ՀԻՎԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.

514 331 5445 x203 կամ 514 909 5203



ՀՈՎԻԸ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին
հովիին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել


Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

Լոյս տաւ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻԻ 6

ARAM I

DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par

Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝ ՁՐԻ
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կը խոստովանուիք անձամբ ներկայանալ
ԵԿԵՂԵՇՈՅՈՅՍ ԳՐԱՏԵՆԵԱԿ

Մոյն թերթիւն ե-նամակուսի ստանալու
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՐՈՂԱՐԿԵՇԵՔ
eglise58@sourphagop.com-ին

ՆԱԽՈՐԴ ԹԻԲԵՐՈՒ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԹԵՁԻՆ ՎՐԱՅ